Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 4-ի նյութական իրավունքի բաժնի 12"33-րդ, 14"46-րդ 18"35-րդ, 20"42-րդ, 28"43-րդ, 36"64-րդ, 40"9-րդ հարցերը, դատավարական իրավունքի բաժնի 5"17-րդ հարցը:

Նյութական իրավունք

33-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից պատասխանի այս տարբերակի ընտրությունը և բողոքում ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի թեև Ե-ն դատավոր էր, սակայն տվյալ խնդրում նշված պայմանների պարագայում չի հանդիսանում պաշտոնատար անձ: Խնդրում նշված իրավիճակում Ե-ն իրականացրել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմ, հետևաբար ըստ հատուկ սուբյեկտով հանցագործությունների որակման կանոնի, արարքը ենթակա է որակման որպես օժանդակություն: Ուստի գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա հանգամանքներից, քանզի հարվածի շեղման վերաբերյալ որևէ փաստական հանգմանք չկա, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի նման որակման պայմաններում ծանր վնաս պատճառելուն քրեաիրավական գնահատական է տրվում երկու անգամ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, ինչը չի բխում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից: Բացի այդ, հավակնորդի պնդումները չեն բխում խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

64-րդ հարցի *վերաբերյալ հանձնաժողովն արձանագրում է, որ թեև շարունակվող հանցագործությունը ենթադրում է նույնական արարքների կատարում, ինչը հավաստվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, սակայն հաշվի առնելով այն, որ հափշտակության պարագայում դրանց եղանակների՝ մեկը մյուսին վերաճման հանգամանքը քննարկման առարկա չի դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, հիմք է տալիս ընդունելի համարել հավակնորդի կողմից դոկտրինալ աղբյուրներով հիմնավորված դիրքորոշումը, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են ինչը հնարավորություն թույլ չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումներից հասկանալի չէ, թե ինչու է ընտրվել դ/ տարբերակը՝ յուրացում և յուրացման օժանդակություն: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Դատավարական իրավունք

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի ըստ քրեական դատավարության օրենսգրքի պրամաբանության կապակցված կարող են կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին և գրավը : Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1991*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 22 միավորը բարձրացնել 2 միավորով՝ արդյունքում արձանագրել 24 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ